

ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարություն.

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

1. ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Աշխատակազմի քարտուղարը՝

- կազմակերպում է աշխատակազմի գործավարությունը, նամակագրությունը, արխիվային գործը և աշխատակազմի տեխնիկական սպասարկման աշխատանքները,

- իրականացնում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և ապահովում է նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը,

- կազմակերպում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը,
- կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից քաղաքացիների ընդունելությունն ու հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման ու ընթացքի նկատմամբ,

- վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնների պահպանման նկատմամբ,

- օրենքով սահմանված դեպքում ու կարգով մասնակցում է զորակոչի, վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին,

- օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի գինապարտների գրանցամատյանը,

Աշխատակազմի քարտուղարն ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազը երկու տարվա ստաժ կամ առնվազը հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ,

բ) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը տեղի կունենա 2017թվականի հուլիսի 26-ին, ժամը՝ 10:00-ին.

2. ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Աշխատակազմի առաջատար մասնագետը՝

- աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է գույքահարկի և հողի հարկի գանձումը, տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը

- աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում է սահմանված կարգով հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարվող անձանց ցուցակը՝ համապատասխան միջոցներ կիրառելու համար:

- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա)միջնակարգ կրթություն

բ) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2017թվականի հուլիսի 26-ին ժամը՝ 11:30-ին.

3. << Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Աշխատակազմի առաջատար մասնագետը՝

-Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է քաղաքացիների

հերթագրում,մասնակցում Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպման աշխատանքներին, կատարում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ տարվող աշխատանքներին.

-աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և նախապատրաստում պատասխաններ.

-աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը

-իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա)միջնակարգ կրթություն

բ) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2017թվականի հուլիսի 26-ին ժամը՝ 13:00-ին.

4. << Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-3) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Աշխատակազմի առաջատար մասնագետը՝

-աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

-աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին,

-իրականացնում մշակաբույսերի հիվանդությունների վնասատուների դեմ պայքարի աշխատանքներ.

-իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա)միջնակարգ կրթություն

բ) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2017թվականի հուլիսի 26-ին ժամը՝ 14:30-ին.

5. << Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-4) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Աշխատակազմի առաջատար մասնագետը՝

-աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը..

- աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության, ռազմահայրենասիրական դաստիարակությանը

-մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին,

- Իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին:

- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն

բ) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2017թվականի հուլիսի 26-ին ժամը՝ 16:00-ին.

6. << Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետը՝

-աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ծառայողական բնույթի նյութերի սահմանված կարգով համակարգչային կազմման աշխատանքներ.

- պատասխանատվություն է կրում համակարգչային տպագրությամբ համայնքապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.

- ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը

-ապահովում է գույքահարկի տեղեկատվական տվյալների՝ շտեմարանի հետ կապված աշխատանքները:

- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն

բ) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2017թվականի հուլիսի 26-ին ժամը՝ 17: 30-ին.

Մրցույթի մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) «Համայնքային ծառայության մասին» << օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Մյասնիկյանի համայնքապետարանում՝ (հասցեն՝ Մյասնիկյան փողոց 4շենք հեռ.՝ (023374) 6-73. կամ << Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, (ք. Արմավիր Խ. Աբովյան 71, հեռ.0237-2-76-49, 0237-2-07-70) ամեն օր , ժամը 9:00-ից մինչև 17:00-ը՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը կկայանա 2017թ հուլիսի 26-ին՝ Մյասնիկյանի համայնքապետարանում: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2017թ.-ի հուլիսի 11-ը: